Որակավորման հարցման ծանուցում

Ամսաթիվ՝ 03 հունվար, 2024 թվական

Ներածություն

Սույն գրությամբ Հայաստանի Կառավարությունը (այսուհետ՝ ՀՀ կառավարությունը)՝ ի դեմս Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ), հայտարարում է Ընտրության ընթացակարգ՝ կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ծառայությունների ձեռքբերման համար: Ընտրության Ընթացակարգի արդյունքում ՆԳՆ-ը նպատակ ունի կնքել պետական-մասնավոր համագործակցության (ՊՄԳ) պայմանագիր՝ Կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման համար (ՊՄԳ ծրագիր):

ՊՄԳ ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցել Հայաստանի թվային վերափոխմանը և բնակչությանը մատուցել բարձրորակ ծառայություններ՝ կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման և տրամադրման համար երկարաժամկետ պետական-մասնավոր համագործակցության ձևավորմանը նպաստելով: Առանցքային նպատակները կենտրոնանում են հետևյալ ասպեկտների վրա.

1. Քաղաքացու փորձառության և ծառայության որակի համար համաշխարհային ստանդարտներին համապատասխան նոր չափանիշների սահմանում՝ ներառյալ սպասման ժամանակի, ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման ժամկետների կրճատումը, գրանցման կենտրոններում հաճախորդների սպասարկման նոր չափանիշների սահմանումը, ինչպես նաև կենտրոնների ֆիզիկական պայմանների բարելավում միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան:

2. Անվտանգ և համաշխարհային չափանիշներին համապատասխանող ճամփորդական և նույնականացման փաստաթղթերի ձեռքբերման և օգտագործման մակարդակի բարձրացում՝ խթանելով Հայաստանի թվային հասարակության զարգացումը, ներառյալ՝ առաջադեմ էլեկտրոնային ծառայությունների և ավտոմատացման այլ հնարավորությունների կիրառումը (օրինակ՝ քվեարկության համար նույնականացում, ավտոմատ սահմանահատում և այլն):

3. Հնացած SS ենթակառուցվածքի փոխարինում գործընթացի անվտանգությունը, արդյունավետությունը բարելավելու համար և հնացած լուծումներին առնչվող գործառնական ռիսկերի կառավարում, ինչպես նաև՝ նորարարական լուծումների որդեգրում՝ շարունակաբար դրանք համապատասխանեցնելով ոլորտի լավագույն չափանիշներին:

Սույն Որակավորման Հարցումը հաստատվել է ՊՄԳ ծրագրի ընտրության ընթացակարգն իրականացնելու համար ստեղծված հատուկ գնահատող հանձնաժողովի կողմից: Սույն փաստաթուղթը նախատեսված է բացառապես Ընտրության ընթացակարգի ապագա Հայտատուների համար՝ Որակավորման հայտերը պատրաստելու և ներկայացնելու:

Սույն Որակավորման հարցումը, ի թիվս այլ փաստաթղթերի, սահմանում է Որակավորման հայտերի ձևական և բովանդակային պահանջները, Որակավորման հայտերի ներկայացման և վերանայման կարգը, ինչպես նաև՝ Որակավորման չափանիշներն ու ըստ կիրառելի օրենքի պահանջի՝ Առաջարկի հարցման հիման վրա մրցութային գործընթացին մասնակցության ելակետային պայմանները:

Հավանական Հայտատուները հրավիրվում են՝ տրամադրելու Որակավորման հայտերը մինչև 2024 թվականի մարտի 14-ը, ժամը 18:00-ը (Երևանի ժամանակով) կամ (1) էլեկտրոնային եղանակով Հայաստանի էլեկտրոնային գնումների համակարգի (ARMEPS) [https://armeps.am/epps/home.do] միջոցով կամ (2) առձեռն թղթային տարբերակով:

Ընտրության ընթացակարգի կազմակերպման համար կոնտակտային անձինք են՝

1. Նելլի Դավթյան, էլ. փոստ՝ mcs@gov.am
2. Ներսես Երիցյան, էլ. փոստ՝ passidppp@isaa.am և nerses.yeritsyan@isaa.am
3. Լինա Պետրուսկեվիցայտե (ՊՄԳ գործարքի համար EY գործարքի խորհրդատու), էլ. փոստ՝ Lina.Petruskeviciute@lt.ey.com

Որակավորման հարցման կառուցվածքը

Կից փաստաթղթերի փաթեթը պարունակում է հետևյալ փաստաթղթերը.

1. **Որակավորման հարցումը և դրա հավելվածները՝**

   - Հավելված 1. Տեղեկատվական թերթիկ
   - Հավելված 2. Կողմնորոշիչ ժամանակացույց
   - Հավելված 3. Ծրագրի հիմնական դրույթները
   - Հավելված 4. Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներ
   - Հավելված 5. Որակավորման չափանիշներ
   - Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն
   - Հավելված 7. Գաղտնիության նախաձեռնության ձև

Տեղեկատվական նպատակով կցվում են նաև հետևյալ փաստաթղթերի նախագծերը.

1. ՊՄԳ պայմանագրի նախագիծը և դրա հավելվածները,
2. Տեխնիկական պահանջների նախագիծը և դրա հավելվածները, ներառյալ՝ Վիճակագրական տեղեկատվության Excel աղյուսակը:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ փաստաթղթերի նախագծերը ենթակա են հետագա վերանայումների և փոփոխությունների: Դրանք որևէ կերպ պարտադիր բնույթ չեն կրում և տրամադրվում են բացառապես տեղեկատվական նպատակներով: Որակավորման հայտերի գնահատման արդյունքներից հետո ընտրված Հայտատուները կհրավիրվեն իրենց կարծիքը և առաջարկությունները ներկայացնելու համար: